

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

«---» ----- 2017թ.

N-----Ա

ՈՐՈՇՈՒՄ

**ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ
ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 21-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2017 թվականի ծրագրի վերաբերյալ» հ.648-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով`

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին` Երևան համայնքի սեփականություն համարվող Երևանի Չեխովի փողոցի հ.24 շենքի հ.5` 54.01 քմ ընդհանուր մակերեսով բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 27.03.2014թ. հ.27032014-01-0142 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Քրիստինե Պետրոսյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ
ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ
ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Նախագծով առաջարկվում է Երևանի Չեխովի փողոցի հ.24 շենքի հ.5` **54.01** քմ ընդհանուր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով, անհատույց օտարել (նվիրել) Քրիստինե Պետրոսյանին:

Քննարկվող բնակարանը համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման **27.03.2014**թ. հ.**27032014-01-0142** վկայականի տվյալների, հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը:

Քրիստինե Պետրոսյանը, սկսած **2003** թվականից, իր տատիկի` Ալեքսանդրա Պատվականյանի հետ, բնակվել, իսկ է **2011** թվականից հաշվառված է Չեխովի փողոցի հ.24 շենքի հ.5 բնակարանում /հիմք` <<Գավառ>> համատիրության կողմից հաստատված բնակիչների հայտարարություն, «Գավառ» համատիրության **17.10.2016**թ. և ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության **18.10.2016**թ. հ.**657734** տեղեկանքներ/:

Քննարկվող բնակարանը, Երևանի քաղաքապետի հ.**2089**-Ա որոշման հիման վրա մասնավորեցվել է Քրիստինե Պետրոսյանի և Ալեքսանդրա Պատվականյանի անվամբ, որի կայացման համար հիմք է հանդիսացել Ալեքսանդրա Պատվականյանի` որպես **1988-1992** թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթված և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձ և քննարկվող հասցեում **10** տարուց ավել հաշվառված լինելու հանգամանքը /Երևան քաղաքի ավագանու **23.12.2014**թ. հ.**270**-Ն որոշման **4**-րդ կետի **6**-րդ ենթակետ/: Սակայն որոշումից ծագող իրավունքի պետական գրանցում չի կատարվել, իսկ Ալեքսանդրա Պատվականյանը մահացել է /հիմք` մահվան **08.06.2015**թ. հ.**215571** վկայական/, ինչից ելնելով Երևանի քաղաքապետի **03.02.2017**թ. հ.**684**-Ա որոշմամբ չեղյալ է ճանաչվել Երևանի քաղաքապետի վերոհիշյալ որոշումը:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի ստորաբաժանման ղեկավարի **28.02.2017**թ հ.ԼԱ-2/2142 գրության համաձայն` Քրիստինե Պետրոսյանի անվամբ Հայաստանի Հանրապետությունում որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ և վերջին հինգ տարվա ընթացքում նշված քաղաքացու կողմից կնքված անշարժ գույքի օտարման և ձեռք բերման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցում Հայաստանի Հանրապետությունում կատարված չէ:

Երևան քաղաքի ավագանու **2016** թվականի դեկտեմբերի **21**-ի հ.**648**-Ն որոշման հավելվածի /Օրագրի/ **3**-րդ կետի համաձայն` Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը կարող է անհատույց օտարվել միայն Երևան քաղաքի ավագանու որոշմամբ, բացառությամբ` Օրագրի **4**-րդ կետի:

Օրագրի **4**-րդ կետով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքների առկայության դեպքում Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանները, բնակելի տները և բնակելի տարածքները կարող են սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել քաղաքացիներին Երևանի քաղաքապետի որոշմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու **2016** թվականի դեկտեմբերի **21**-ի հ.**648**-Ն որոշման հավելվածի /Օրագրի/ **4**-րդ կետի **1**-ից **7**-րդ ենթակետերով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքները, ուստի` Քրիստինե Պետրոսյանի սեփականության իրավունքը տարիներ շարունակ զբաղեցրած բնակարանի նկատմամբ ձևակերպելու համար անհրաժեշտություն է առաջացել ընդունելու համապատասխան որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

**«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ
ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ
ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ
ԲԱՑԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն
անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական
ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ